

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊՈԵԶԻԱՆ «ԱՆԱՀԻՏ» ՀԱՆԳԵՍՈՒՄ

ՄԱՐԳԱՐԻՏԱ ՄԱԼԽԱՍՅԱՆ

1898 թ. նոյեմբերին Փարիզում սկսեց հրատարակվել «Անահիտ» ազգային, գրական, գեղարվեստական հանդեսը: Նրա հիմնադիր-տնօրենը՝ բանաստեղծ, արձակագիր, գրականագետ, թարգմանիչ, ազգային մշակութային գործիչ Արշակ Չոպանյանը, 1895 թվականին, Պոլսից բազմաթիվ հայ գրողների և մտավորականների հետ, հազիվ փրկվելով համիդյան սպանդից, ապաստանում է Փարիզում և մեծ եռանդով ձեռնարկում «Անահիտ» հանդեսի հրատարակությունը, որը ընդմիջումներով շարունակվեց մինչև 1949 թվականը: Նրա վսեմ առաքելությունը հայրենասիրական-ազգասիրական մղումներ ունեւր և՛ զուտ հայկական դատի պաշտպանության, և՛ «մտավորական գործի» առումով:

Գրական գործիչների պարտքը Չոպանյանը ամփոփում է երեք կետով, ընդգծելով նաև դրանց հերթականության կարևորությունը. 1. ուսումնասիրել մեր նախնյաց գրականությունը և արվեստը, 2. ուսումնասիրություններ կատարել օտար գրականության ու արվեստի մեծագույն դեմքերի մասին, 3. ստեղծել ինքնատիպ գործեր մեր ժամանակի ոգուն, պահանջներին, ճաշակին համապատասխան: Այս պահանջներն արդեն բնութագրում են Ա. Չոպանյանին իրրև գրական մեծ ու ճշմարիտ գործչի:

«Անահիտը», բազմիցս անդրադառնալով հայ գրականության վրա եվրոպական գրականության թողած ազդեցության հարցերին, ցույց է տվել, որ այն իր ոլորտի մեջ է առել գրեթե բոլոր ժանրերը: Եվրոպական գրականությունից «Անահիտը» ամենից շատ իր էջերում տեղ է տվել պոեզիային: Դա հասկանալի է. ինքը՝ Ա. Չոպանյանն իր գրական ճանապարհը սկսել էր բանաստեղծությամբ, քաջ գիտեիր եվրոպական պոեզիան, ու որքան էլ նրա հետաքրքրությունների շրջանակները լայն էին, բազմաբովանդակ, այնուամենայնիվ, նրա կայուն նախասիրությունը մշտապես մնաց պոետական ստեղծագործությունը: Կար և երկրորդ պատճառը. պարբերականը պահանջում էր օպերատիվություն, արագ ու գործնական արձագանք, գրական-հասարակական ամենատարբեր երևույթների անմիջական արտացոլում: Պոեզիան այդ իմաստով առավել հարմար սեռն էր:

Բնականաբար, «Անահիտը» եվրոպական բանաստեղծներից՝ դասական, թե՛ ժամանակակից, առավել մոտ էր կանգնած ֆրանսիացի հեղինակներին: Առաջին համարներում հանդեսը մեծ տեղ է հատկացնում ֆրանսիական ժամանակակից պոեզիայի այնպիսի ներկայացուցիչների, ինչպիսիք են Ստեֆան Մալառմեն, Հանրի դը Ռենիեն, Պիեռ Լուիսը, Վիքթոր Մարգրիդը, Լեոն Դիերքսը և ուրիշներ: 1898 թ. երկրորդ համարում, Մալառմեի մահվան առիթով, հանդեսը տպագրում է նրա «Մաղիկները» քերթվածը, ինչպես և Լեոն Դիերքսի «Ղազարոս» բանաստեղծությունը՝ երկուսն էլ ազատ-արձակ թարգմանությամբ: Ապա միաժամանակ, երկու հեղինակների սեղմ դիմանկար-բնութագրումների ձևով, զարմանալի դիպուկ զուգահեռներով ու համադրություններով փոքրիկ քննախոսություններ են տրվում առհասարակ ֆրանսիական արդի պոեզիայի վերաբերյալ: Մալառմեն մեծ ժառանգություն չի թողել, գրում է «Անահիտը», արձակ բանաստեղծությունների մեկ հատոր («Էջեր»), խորհրդածությունների մի գիրք («Բանդագուշանք») և մի շարք հոգվածներ: Մահը վրա հասավ հանկարծակի և շատ բան մնաց կիսատ, բայց նրա լավագույն

գործերը «ոսկի բաժակներ են, որոնց մեջ տիեզերքներ կան խտացված և կրավեն իր անունը բանաստեղծության աղամանդյա էջին մեջ արձանագրելու»¹։

Ս. Մալառմեի բանաստեղծական դպրոցն է անցել Ժորժ Ռոդենրաքը։ Նուրբ ու խորունկ այս բանաստեղծը, հայտնում է «Անահիտը», կարծես հետևելով սիրելի վարպետին՝ Մալառմեին, նրա մահից հետո երկար չի ապրում։ Ազգության բնագիացի՝ ինչպես Մորիս Մետերլինկը, էմիլ Վերհարներ, Շառլ Հյուսմանսը, Ժորժ էքյուն, Քամիլյ Լըմոնիեն և ուրիշներ, որոնք ֆրանսիական գրականությանը «նոր գույն, նոր ուժ բերեցին», Ժ. Ռոդենրաքը, կրելով նաև Շարլ Բոդլերի ազդեցությունը, ստեղծել է չափազանց արժեքավոր գործեր։ «Անահիտը» տպագրում է նրա վերջին՝ «Մենուդի քերթվածը» բանաստեղծությունից մի հատված (1898, № 2, էջ 108—109), արժանի տուրք մատուցելով ժամանակակից ֆրանսիական պոեզիայի հետաքրքիր դեմքերից մեկի հիշատակին։

Մշտապես հանդեսի ուշադրության կենտրոնում էր էմիլ Վերհարնի հզոր պոեզիան։ Դեռևս 1900 թվականին Սիամանթոն «Անահիտի» էջերում տպագրում է «Բարիզյան նոթեր» արձակ էտյուդը և քաղաքի առեղծվածը հասկանալու, իր տպավորությունները խտացնելու նպատակով դիմում է Վերհարնի տողերին։

Այս քաղաքին մեջ, մեկին ի մեկ սարսափահար՝
Գիշերային արհավիրքն ու տոներն կարմիր,
Հրաշանալու ու մեծնալու համար,
Հոգիս, դուն քեզի հետ առանձնացիր (1900, № 4—5, էջ 111)։

1903 թ. «Անահիտի» համարներից մեկում (1903, № 8, էջ 125), Ա. Զոպանյանի թարգմանությամբ տպագրելով է. Վերհարնի «Սերը» բանաստեղծությունը, խմբագրությունը «ցեղով պիլճիքացի» այս աշխարհաճանաչ բանաստեղծին անվանում է «ֆրանսիական արդի բանաստեղծության Հյուկո»։ Եվ տեղն ու տեղը կատարում է լրացում. է. Վերհարնը ֆրանսիական ժամանակակից պոեզիայի «Հյուկոն է՝ կերպով մը, Հյուկո մը ավելի խորիմաստ, ավելի նորախոհ և շղուտ» (1903, № 8, էջ 125)։ է. Վերհարնի քնարը պետք էր «Անահիտին» նաև ոգու առնականությունը պահպանելու համար։ Եվ վերհարնյան շնչի պոեզիային հանդեսը հետագայում անդրադարձել է ոչ մեկ անգամ։

Ա. Զոպանյանը շատ հետաքրքիր հոդված է նվիրել Ալֆրեդ դը Վինյին, 1905 թ. 7—8 միացյալ համարում, ընդարձակ խոսքը կոնկրետացնելով նրա «էլոս» պոեմի վրա։ Այս նույն համարում զետեղել է ամբողջ պոեմը իր իսկ թարգմանությամբ՝ «էլոս կամ հրեշտակներու քույրը» վերնագրով։ Ա. Զոպանյանը բերում է ֆրանսիական ժամանակակից բանաստեղծության նշանավոր դեմքերից մեկի՝ Հանրի դը Ռենիեի տողերը Ա. Վինյի ու նրա «էլոսի» մասին. «Ալֆրեդ դը Վինյի ռահվիրա մը եղավ, մինը եղավ անոնցմե, և հոգ կտեսնեմ իր փառքի գլխավոր տիպոսը, որոնք ԺՖ դարուն սկիզբը ֆրանսիական բանաստեղծությունը վերածուցին—վերածույում, ուր ան մաքրվեցավ ու ճոխացավ ընդմիջտ» (1905, № 7—8, էջ 141)։ Ա. Զոպանյանը գրում է, որ Վինյի ստեղծագործությունը վերանորոգեց ֆրանսիական պոեզիան՝ վերըստին դասական ու աստվածաշնչական աղբյուրներին դիմելով, հույզին ու բնությունը դառնալով։ «էլոսով» բանաստեղծությունը նորեն գտավ շնորհ մը, որ մոռցված էր՝ զմայելի թափանցիկություն մը, հոսանուտ ծիածանում մը, գաղտնի հրապույր մը, ստվերին ու խորհուրդին զգացումը» (1905, № 7—8, էջ 141)։ Հանրի դը Ռենիեն ընդգծում է, որ «էլոսան» արդի բանաստեղծության ծնունդն է և զուգահեռներ է գծում Անդրե Շենիեի, Լամարթինի ու Հյուգոյի պոեզիայի միջև։ Ա. Զոպանյանը, լրացնելով Ռենիեին, գրում է, որ Վինյին թե

¹ «Անահիտ», 1898, № 2, էջ 73—74 (այսուհետև «Անահիտ» հանդեսի տարբերակներ, համարները և էջերը կնշվեն տեքստում, մեջբերումներին կից)։

«էլլոայով» և թե «Մովսես», «Ճակատագիրներ», «Գայլի մահը», «Հովվի տունը», «Զիթենիների պարտեզը» քերթվածներով վերանորոգել է ֆրանսիական բանաստեղծությունը ոչ միայն ձևի, այլև ոգու մեջ: Փիլիսոփայական ձգտումների այն վեհությանը և բարձրությանը, որոնց հասնում է Վինյին իր հույակապ գործերում, իրենից առաջ անծանոթ էին ֆրանսիական քնարին: Նույնիսկ նրանից հետո եկած շատ շքեղ բանաստեղծների մեջ այդ առումով նրան հավասար քչերը կան:

Ա. Չոպանյանը բնութագրում է Վինյիի «Մովսես», «Հովվի տունը», «Զիթենիների պարտեզը» բանաստեղծությունները և հանգամանորեն քննում «էլլոա» պոեմը: Նա հետաքրքիր համեմատական զուգահեռներ է անցկացնում Հոմերոսի աստվածների, Միլտոնի Սատանայի, Գյոթեի Մեֆիստոֆելի ու Վինյիի հերոսի՝ էլլոայի միջև: Վերլուծությունն աչքի է ընկնում խորությամբ, գրական երկի գաղտնիքներն ու առանձնահատկություններն ընկալելու հմտությամբ: Նա «էլլոան» դասում է համաշխարհային փիլիսոփայական պոեզիայի ամենաերևելի ստեղծագործությունների շարքը:

Շ. Բողլեբի «Նեղձերուն մահը» բանաստեղծության թարգմանությունը Ա. Չոպանյանը կատարել է իրեն հատուկ մի անդամաճանելի սկզբունքով. որքան հնարավոր է հարազատ մնալ բնագրին, պահպանել բնագրի ոգին: Իսկ այս երգում Շ. Բողլեբի ոգին միստիկ երազայնություն է՝ մահվան ըղձալի կամ երանելի սպասման խորհրդանշանով:

Մահն է, որ կը սփոփե, ավաղ, ու կապրեցնե.
Նրպատակն է կյանքին, ու միակ հույսն է, որ
Մեզ էլիքսիրի մը պես կը ցնցե, կարբեցնե,
Ու մինչև իրիկուն քալելու սիրտ կուտա:
Փոթորիկին, ձյունին ու եղյամին մեջեն՝
Լույս է, որ կը շողա հորիզոնին վրա սև,
Ուղեգրքին հիշած պանդոկն է անվանի,
Ուր պիտի կշտանանք ու հանգչինք ու քնանանք

(1905, № 1, էջ 12):

Մասնավորապես 30-ական թվականներին Բողլեբի բազմաթիվ բանաստեղծություններ թարգմանաբար երևում են հանդեսի էջերում՝ հայ ընթերցողներին լայն ծանոթություն տալով նրա քնարերգության մասին. «Յարասացութիւնք սատանայի» (1935, № 5—6), «Գովասանք իմոյ Փրանկիսկայի» (1936, № 1—2 հունվար-մարտ), «Փարոսներ» (1937, № 1—2 հունվար-մարտ), «Դատապարտված կիներ» (1938, № 1—3 հունվար-ապրիլ), «Աբել և Կայն» (1938, № 5—6 սեպտեմբեր-դեկտեմբեր) բանաստեղծությունները, որոնց թարգմանությունները, անշուշտ, լուրջ թերություններ ունեն: Թարգմանիչ Հրաչ Քաջարենցը միշտ չէ, որ կարողացել է տալ Բողլեբի արվեստի հմայքը, նրա երգերի քնարականությունը, գեղարվեստական խոսքի յուրահատկությունները: Սակայն այս գործերի թարգմանությունն ու տպագրությունը ինքնին բնութագրական է:

«Անահիտը» յուրահատուկ ակնածանքով է վերաբերվում Ֆրեդերիկ Միստրալի ստեղծագործությանը: Երբ 1909-ին գրական ամբողջ աշխարհը մեծ փառավորությամբ տոնեց Պրովանսի նշանավոր բանաստեղծ Ֆ. Միստրալի անմահ հրաշակերտության՝ «Միրեոյի 50-ամյակը», «Անահիտը» առանձնահատուկ կարևորություն տվեց այդ հանդիսություններին: Օժտված լինելով հզոր ու վճիռ անհատականությամբ, գործվագին սիրով կապվելով իր փոքրիկ հայրենիքի անցյալ հիշատակներին ու ավանդություններին, երբեմնի փառահեղ և գեղեցիկ լեզվին ու պոեզիային, իբրև նուրբ գեղեցկագետ, Ֆ. Միստրալը ըմբռնեց, թե ինչ հարուստ ու անգին «հանք» կա ազգային լեզված՝ հողի մեջ և համարձակորեն պեղեց այդ հանքը, երևան բերեց շուրջ գանձեր: Ֆ. Միստրալը իր ուժերը նվիրեց պրովանսական գրականության վերածնունդին: Ծվ դա հաջողվեց: Հարավցի գրողների՝ Դոգեի, Արենի և ուրիշների պես նա անմահա-

ցավ, ըստ որում՝ իր գլուխգործոցի՝ «Միրեռոյ» շնորհիվ նա լիովին արդարացրեց պրովանսական պոեզիայի ինքնուրույն գոյության, նրա հարուստ իրավունքը:

«Անահիտը», որի նպատակամղված գրական-հասարակական գործունեության սեփականությունը, ի վերջո, հանգում էր մեր ազգային գոյության մեծ խորհրդին, անդրադառնում էր Ֆ. Միստրալի դերին, նրա ստեղծագործության գնահատումներին, որովհետև Պրովանսի ճակատագրի ինչ-ինչ կողմեր հուշում է հիշեցնում էին հայ աշխարհի ուրույն ճակատագիրը: Պատահական չէ, որ մինչ այդ, դեռևս 1905—1908 թվականներին, Ա. Չոպանյանը ուսումնասիրություններ է գրել Ֆ. Միստրալի մասին և տպագրել «Լուսմա» հանդեսում²:

«Անահիտը» տպագրում է հատվածներ «Ոսկի կղզիներ» ժողովածուից՝ «Բաժակը», «Ապաշխարության սաղմոս», «Կարոտ», «Գեղուն առ լատին ցեղը», «Մակալի»: Վերջինս Արշակ Չոպանյանը համարում է «ամենին զմայլելի հատվածներն մեկը՝ գրված ժողովրդական բանաստեղծության ոճով»: Բոլոր ժողովրդի խոհերին ու տրամագրություններին: «Ապաշխարության սաղմոս» բանաստեղծությունը գրվել է 1870-ին, ֆրանս-պրուսական պատերազմի ժամանակ: Ֆ. Միստրալը մի անհուն գորովով էր սիրում ոչ միայն իր ծննդավայրը, իր բնաշխարհը, այլև՝ ողջ Ֆրանսիան: Պատերազմի մեջ Ֆրանսիայի պարտությունը խոր վիշտ պատճառեց նրան: Հենց այդ ցավն է երգում «Ապաշխարության սաղմոս» բանաստեղծության մեջ, ապա և ժողովրդի մեծ հավատը, նրա կենսունակությունը:

«Անահիտի» 1930 թ. № 1-ում, Միստրալի ծննդյան 100-ամյակի առթիվ, տպագրվում են Ա. Չոպանյանի և Ալֆոնս Դոգերի հոգվածները, ապա մագիստր Լեոն Դոգերի (Ալֆոնս Դոգերի որդու) ճառը բանաստեղծի մասին: Լ. Դոգեն իր ճառն ասել է Ֆ. Միստրալի հոբելյանի առթիվ Փարիզում կայացած մեծ հանդիսությանը: «Անահիտը» հայտնում է, որ առհասարակ հայր և որդի Դոգենները Միստրալի մասին գրել են յուրաքանչյուրը քառասուն հոգված: Նույն համարում Ա. Չոպանյանի թարգմանությամբ լույս են տեսնում նաև Պրովանսի նշանավոր բանաստեղծի «Կոչերգ առ հոգին Փրովանսի», «Գեղուն քաթալան բանաստեղծներուն ուղղված», «Գեղուն առ լաթին ցեղը» երգերը: Այն օրերին, երբ նշվում էր Ֆ. Միստրալի ծննդյան 100-ամյա տարելիցը, լատինական աշխարհը մեծ շուքով տոնում էր Վերգիլիոսի ծննդյան 2000-ամյակը: Լ. Դոգեն զուգահեռ է տանում երկու բանաստեղծների միջև՝ «բարձր բանաստեղծության ջահը հաջորդ սերունդներում փոխանցելու», այսինքն նրանց թողած ավանդների առումով: «Միրեռ» ստեղծագործությունը դասում է շարքը «քերթողական այն մեծ հուշարձաններուն, որ անցյալին նայելով՝ ապագային կտիրապետեն» (1930, № 1, էջ 85): Լ. Դոգեն ըստ արժանվույն բնութագրում է Միստրալի «Ոսկի կղզիները», «Քալենթալը»՝ նրա ամենադյուցազներգական քերթվածը, գեղարվեստական արտահայտչականությամբ բնորոշ «Լուսնամուտը» — այդ յուրօրինակ եղերերգը, «Իմ գերեզմանը» սքանչելի բանաստեղծությունը՝ «Զիթենականք» ժողովածուի մարգարիտը: «Կոչերգ առ հոգին Փրովանսի» բանաստեղծությունն ունի հայրենասիրական ուժեղ շեշտ, գեղեցիկ կոչ է՝ ազգի միասնության ու համախմբման: «Գեղուն քաթալան բանաստեղծներուն ուղղված» ստեղծագործությունը նույնպես գրված է քաղաքացիական-հայրենասիրական ուժեղ պաթոսով:

1902 թ. ֆրանսիան մեծ շուքով ու արտակարգ հանդիսավորությամբ տոնեց իր բացառիկ դեմքերից մեկի՝ Վիկտոր Հյուգոյի ծննդյան 100-ամյակը: 1935 թ. նշվեց Հյուգոյի մահվան 50-ամյակը: Վերջինս իր մասշտաբով ու շքեղությամբ, ինչպես նշում է «Անահիտը», գերազանցեց դարասկզբի հանդիսությունները: Եվ Փարիզի Պանթեոնում, և՛ Ֆրանսիայի գրողների ընկերության նախաձեռնությամբ կազմակերպված միջոցառումներում, և՛ Սորբոնի

² «Լուսմա», 1905, օգոստոս-սեպտեմբեր, հոկտեմբեր, 1908, հոմվար-ապրիլ:

համալսարանում տեղի ունեցած պաշտոնական հանդիսություններում, և՛ ժողովրդական երեք հսկա ցույց-հավաքություններում գեղեցկի և իդեալի երկրպագուները ասես ենում էին Եվրոպայի կենտրոնում հրեշավոր չափերով ահագնացող ֆաշիստական շարիքի դեմ, տոնում էին բանականի ու մարդկայնության հաղթանակը՝ ընդդեմ հակաբանականի և անմարդկայնի:

Օտարազգի գրողներից Հյուգոն ամենատարածվածն է հայ իրականության մեջ՝ Շեքսպիրի հետ միասին: Վերջինս՝ բեմի միջոցով, իսկ Հյուգոն իր «Թըշվառներով» մեր ժողովրդի բոլոր խավերի ծանոթ ու պաշտելի հեղինակն է» (1935, № 5, հուլիս-սեպտեմբեր, էջ 22): Հանդեսի կարծիքով Հյուգոն մեծ ազդեցություն է ունեցել հայոց (մանավանդ՝ արևմտահայ) ժամանակակից դրականության վրա, որը մասնավորապես զգալի է հայ ռոմանտիզմի ձևավորման ու զարգացման ժամանակաշրջանում: Հայ ռոմանտիկ գրողների մեջ Հյուգոյի երկրպագուների թիվը մեծ է: «Անահիտը» հանգամանորեն անդրադառնում է Հյուգոյի հասարակական-քաղաքական հայացքների զարգացման, հակասությունների, նրա գեղագիտության և այլ հարցերին, ցույց տալիս, թե նա ինչպես է հեղաշրջել տիրող էսթետիկական «Հինցած, մաշած կանոնները, նոր լեզու, նոր ոճ, նոր տաղաչափություն առաջ բերել, վերանորոգել ֆրանսիական բանաստեղծությունը» (1935, № 5—6, էջ 22):

Հյուգոյի բնութագրումներում Ա. Չոպանյանը զուգահեռներ է անցկացնում, պատմական էքսկուրսներ կատարում, տալիս նախահյուգոյան ու ետհյուգոյան փուլերի գրականություն և առանձին գրողների գնահատականը: Դրանք մի կողմից օգնում են Հյուգոյի դերի, նրա ստեղծագործության պատմական արժեքի ճիշտ վերհանմանը, մյուս կողմից՝ պարզում բնութագրումների հեղինակի՝ Ա. Չոպանյանի քաջատեղյակությունը՝ ֆրանսիական հին ու նոր գրական կոթողներին: Նույն առիթով է նաև բերվում Անատոլ Ֆրանսի մեկ խոսքը. «Թույլ բաներ շատ կան Հյուգոյի արտադրությանց մեջ... բայց երբ նկատի ունենանք իր գեղեցիկ էջերը, ստիպված ենք խոստովանել, որ այդ ահավոր մարդը ամեն ինչ ունի, ոչ միայն գործություն և շունչ, զոր որևէ մեկին ավելի ունի, այլ նույնիսկ նրբություն, ոչ միայն բարձր քնարերգություն և հզոր դուրսգանքություն, այլ մտածված դիտողություն, սրամտություն, ամեն ինչ» (1935, № 5—6, էջ 10): Ա. Չոպանյանը հայտարարում է. «Սա հյուգոյապաշտ մը եղած եմ պատանության օրերես և այդպես ալ մնացած եմ» (1935, № 5—6, էջ 7): Նա խոստովանում է, որ Հյուգոյից հետո խորապես զգացել, ճանաչել ու տարվել է «մյուս երեք հսկաներով»՝ Դանթեով, Շեքսպիրով, Գյոթեով, ապա՝ Լամարթինով ու Մյուսետով: Այս պաշտամունքի հասնող սիրո խորքերից էլ Ա. Չոպանյանի վեպերի մոտիվները թե՛ Հյուգոյի անձնավորության ու գործի, թե՛ նրա գնահատողների ու քննադատների նկատմամբ: Հստ Չոպանյանի, Հյուգոն երգիչն է առողջ, ուժեղ, պայքարող, լավատես, հավատավոր, ստեղծագործ, կյանքի սիրահար մարդկանց, նրանց հոգու թարգմանը: Շեքսպիրի պես ոչ միայն իր ազգի բանաստեղծն է, իր ազգի քերթության գերագույն արտահայտիչը, այլև ամբողջ մարդկության: Իսկ մարդկությունը՝ հանձին Հյուգոյի, տեսնում է համաժողովրդական կյանքի ու ճակատագրի էական ու տևական հարցերի մեծագույն երգիչներից մեկին:

Այնուհետև Ա. Չոպանյանը դառնում է Հյուգոյի բանաստեղծական ժառանգության թարգմանությունը: Ցավոք, գրում է նա, քերթվածներից դեռևս շատ քիչ բան է թարգմանված: Մ. Պեշիկթաշյանը թարգմանել է «Ուրվականը» բանաստեղծությունը և դա «հրաշալիք մըն է»³: Մի քանի կտորներ թարգմանել են Թովմաս Թերզյանը, Ալֆասյանը, Նդիշե պատրիարք Դուրյանը, Սիպիլը, Թորգոմ պատրիարք Գուշակյանը: Պակասը լրացնելու նպատակով Ա. Չոպանյանը «Անահիտ» հրեկյանական համարում (1935, № 5—6) զետեղում է Հյուգոյի մի շարք քերթվածների հայերեն թարգմանությունները՝ «Մարաշախտ Նեյի դեռատի որդոյն ալպոմին մեջ գրված», «Տաղ» և «Բանաստեղծու-

³ Ա Ր շ ա կ Չ ռ ա պ ա ն յ ա ն, Նրկեր, Երևան, 1966, էջ 535:

թյուն» («Հայեցողություններ» ժողովածուից), «Սերմանողը» («Փողոցի և անտառի երգերը»-ից), ապա հինգ բանաստեղծություն՝ «Պատուհասներ» և «Ահավոր տարին» գրքերից։ Ա. Չոպանյանը հույս ուներ, որ իր կատարած գործը «կրնա հետևողներ առաջ բերել»՝ Հյուգոյի նոր թարգմանությունների ու մասսայականացման առումով։

1936 թ. սկզբներին Ա. Չոպանյանը կազմում և Փարիզում հրատարակում է «Վիկտոր Հյուգոն, Շատուրիանը և Լամարթինը հայ գրականության մեջ» ֆրանսերեն գիրքը։ Սա լուրջ երևույթ էր և լայն արձագանք ստացավ։ «Անահիտը» տպագրում է մի շարք անվանի մարդկանց կարծիքները գրքի մասին։ Ա. Չոպանյանը Վ. Հյուգոյին համարում է ամենից առաջ հավատի, կորովի, գաղափարապաշտ պաշարի բանաստեղծ։ Եվ հաճախ դիմում է նրան՝ այդ տիպի երկերի համար։ Սակայն մերթ ընդ մերթ «Անահիտը» տեղ է տալիս նաև Վ. Հյուգոյի այն բանաստեղծություններին, որոնք ծնվել են դատություն ու վհատության պահերին։ 1947 թվականի երկրորդ համարում (հուլիս-դեկտեմբեր) Ա. Չոպանյանի թարգմանությամբ տպագրվում է Վ. Հյուգոյի «Ողբ» բանաստեղծությունը։ Այս գործը գրվել է այն շրջանում, երբ հեղինակը նապոլեոն Երրորդի սահրանքներում աքսորված էր Անգլիայի կղզիներից մեկը, և կարծես մենությունը քիչ էր, նոր աղետներ էլ են ավելանում. ողբերգական մահով վախճանվում է նրա ամենաուրիշի դուստրը։

«Անահիտի» տարբեր տարիների համարներից կարելի է կազմել Վիկտոր Հյուգոյի կյանքի ու ստեղծագործության տարեգրությունը։ Սա նույնպես մի վկայություն է, թե որքան հետևողական էր հանդեսը ֆրանսիական պոեզիայի հանդեպ իր նախասիրությունների մեջ, թե ինչպիսի նախանձախնդրությամբ էր մասսայականացնում գեղեցիկ և հումանիստական պոեզիան։

Ֆրանսիական բանաստեղծության ամենախնամատիպ երգիչներից մեկի՝ Պոլ Վերլենի մահից հետո, նրա պոեզիայի համակիրներն ու սիրահարները ամեն տարի, բանաստեղծի մահվան օրը, հավաքվում էին նրա գերեզմանի մոտ և պոեզիայի յուրովի օր նշում։ 1911 թ. հունվարի 14-ին այդ հանդիսությունը ներկա է լինում և Ա. Չոպանյանը, որը և իրեն հատուկ ոճով ու իմացությամբ ելույթ է ունենում Վերլենի հիշատակին։ Ֆրանսիական մամուլը արձագանքում է դրան, տպագրում Ա. Չոպանյանի խոսքը։ Բնականաբար, «Անահիտում» նույնպես տպագրվում է Ա. Չոպանյանի այդ հետաքրքիր ու բովանդակալից ելույթը։ Միայն ֆրանսիացի մեծ բանաստեղծի տոնը չէ, որ այսօր Փարիզը նշում է, ասում է Ա. Չոպանյանը։ Նույն ինքը՝ մեծ բանաստեղծությունն է՝ իր ամենամաքուր, ամենախնամատիպ, հավերժորեն երիտասարդ, խորապես մարդկային իր ձևի մեջ այսօր շարժում գեղեցիկի սիրահար բոլոր մարդկանց միտքն ու սիրտը՝ անկախ ազգությունից։ Ֆրանսիացիներին այսօր միանում են ամենքը՝ պատվելու համար նրանց ազգային հանձարին։ Հայ գրականության մեծարանքն է բերում Ա. Չոպանյանը. «Fêtes Galantes»-ի երգիչը առաջին թույլեն իսկ՝ ունեցավ մեր մեջ ջերմեռանդ սքանչացողներ, իր տաղերեն ոմանք թարգմանված են հայերեն, ուսումնասիրություններ երեցած են իր գործին վրայ, և իր ազդեցությունը կզգացվի մեր նոր բանաստեղծներեն ոմանց մոտ։

Վերլեն՝ Ֆր. բանաստեղծության ամենեն քաղցր, ամենեն վրդովիչ ձայնն է։ Եթե Վինեի մեզի կ'երեայ՝ ֆրանսիական քնարերգության վերև սավառնաթև է ինչպես Ս. Հոգին մարմնավորող լուսեղեն աղավին, եթե կտեսնենք Հյուգոն՝ հզոր արծվի մը սեզ թռիչքովը ռոմանթիկ երկնքին մեկ ծայրեն մյուսը խոյացող, եթե Լամարթինը մեզի կթվի մեղմօրեն նավել, ինչպես կարապ մը անարատ, դաշնակությանց լճին դուրսված ջուրերուն վրայ, լավագույն կերպով կարելի չէ կարծեմ բնորոշել Վերլենը՝ քան զայն նմանցնելով հին հեքիաթին պարզ ու վսեմ Սոխակին։ Սոխակին, որ ցավագին սիրով մը կըտողջորի Վարդին համար, և գիշերային մենությունները հմայող և իր կարոտակեզ ցավը օրորող իր երգին գերագույն քաղցրությունովը կշանայ, մեղա-նուշ ու եղբրական ճիգով մը, ուր իր կյանքը կսպառի, հրապուրել, ողորբել, գրա-

վել այդ խորհրդավոր ու անգութ Վարդը՝ այնքան անմատչելի, որքան յանկուցիչ» (1911, № 9—12, էջ 228)։

1929 թ. հանդեսի առաջին համարում տպագրվում է Վիլիս դե Լիլ-Ադանի՝ ֆրանսիական ռոմանտիզմի վերջին շրջանի նշանավոր դեմքերից մեկի «Գերագույն սերը» ստեղծագործությունը՝ Ա. Չոպանյանի թարգմանությամբ։ Փոքրիկ ծանոթության մեջ Վիլիս դե Լիլ-Ադանը համարվում է Ֆրանսիայի մեծանուն գրողներից մեկը, երևելի մտածող ու արվեստագետ, «բարձրաթուիչ, խորհրդաշունչ բանաստեղծ մը՝ թրթռուն ու վրդովիչ արձակի մը մեջ, որ իր խորախոհ քնարերգության կմիացնելու պատմողի, երգիծաբանի ու թատերագետի բարձր կարողությունները։ Սեմպոլիսիսները իրավամբ զինքը իրենց մեծ նախակարապետներեն մին համարեցին ժերար դը Ներվալին ու Պոտլեռին հետ» (1929, № 1, էջ 79)։

Ֆրանսիական գրականության մեջ յուրօրինակ տեղ է գրավում կոմսուհի Աննա դը Նոայլը՝ Վախճանվելով, թողնում է բանաստեղծությունների յոթ հավաքածու՝ «Անհամար սիրտը», «Գերուն հովանվույն տակ», «Շլացումներ», «Ողջերն ու մեռելները», «Հավերժական ուժերը», «Միտք երգեր», «Տառապելու պատիվը» և մի քանի վեպեր՝ նորից բանաստեղծական քանքարով ակոսված, որոնցից «Նոր հույսը» վեպը հոգեբանական դիտարկումների ինքնատիպ մի ստեղծագործություն է։ Ֆրանսիացի անվանի շատ գրականագետներ ու քննադատներ անվերապահ հիացմունք արտահայտեցին նրա մասին և հատկացրին առաջնակարգ տեղ։ «Ենայթիլ ու լեյլի Միրպոն իսկ, որ քիչ գրողի կհավաներ,— գրում է հանդեսը,— և որ ամենամեծ կին-գրողներուն շատ բարեկամ չէր խանդավառ ողբովածի մը մեջ իր անվերապահ սքանչացումը հայտնեց այն մեծ բանաստեղծին համար, զոր կգտնենք տ. դը Նոայլի մեջ» (1933, № 1, էջ 57—58)։ Աննա դը Նոայլի ստեղծագործությունը անծանոթ էր հայ գրականասեր հասարակությանը։ «Անահիտը» գտնում է, որ հայերեն շատ լավ կվերարտագրվի նրա թրթռուն, լայնաշունչ քնարերգությունը և պետք է ձեռնարկել թարգմանությունը։

Հանդեսը անդրադառնում է ևս երկու ֆրանսիացի բանաստեղծների՝ նրանց մահվան առիթով։ Մեկը Ժան Ռիթթյուն է, մյուսը՝ Ֆակյուսը։

«Անահիտը» ամենայն ուշադրությամբ հետևում էր նաև եվրոպական ուրիշ ժողովուրդների պոեզիային և իր էջերում հաճախակի զետեղում ինչպես դասական, այնպես էլ ժամանակակից բանաստեղծների գործեր։ Հանդեսում տեղ են զբաղեցրել անգլիական, իտալական, գերմանական, լեհական, ռումինական պոեզիայի ականավոր դեմքերը՝ Շեքսպիրը և Բայրոնը, Շելլին և Վերգիլիոսը, Շիլլերը և Գյոթեն, Միցկևիչը և էմինեսկուն, բաղում-բազում այլ պոետներ։ Տպագրվում էին ոչ միայն նրանց բանաստեղծությունները, հատվածներ պոեմներից, չափածո դրամատուրգիական երկերից և այլն, այլև հոգվածներ, ուսումնասիրություններ, հաղորդումներ ու բազմազան տեղեկություններ հեղինակների մասին։ Ինտերնացիոնալիստական ոգին, իսկական դեմոկրատական ուղղությունը, գրական երևույթների նկատմամբ անսահման հետաքրքրությունը «Անահիտի» առջև բացում էին նոր հեռանկարներ հետագա գործունեության համար։

Անգլիական քնարերգության նշանավոր դեմքերից մեկին՝ Չարլզ Ալկերն Սոփինսերին մահվանն արձագանքելով, «Անահիտը» տպագրում է նրա «Երգեր ալգաբացից առաջ» հատորից «Գիշերային հսկողները» արձակ բանաստեղծության թարգմանությամբ (1929, № 1, մայիս-հունիս, էջ 40), որը կատարվել է Գարրիել Մուրիեի ֆրանսերեն բառացի թարգմանությունից։ Բանաստեղծը ծանուցման մեջ համարվում է իր երկրի «ամենեն հզոր, ամենեն հուզիչ ու ճարտարվեստ քնարերգականներեն մին» (1929, № 1, էջ 40)։

Անգլիացի մեծ բանաստեղծ Պերսի Բիշի Շելլիի «Արտույտ մը» ծավալուն բանաստեղծությունը Հակոբ Անտոնյանի թարգմանությամբ, իբրև ազատասիրական ոգու խոսացում, յուրովի արձագանք էր անհատի հոգու կանչերին։ Մի խոր, յուրովի զգացողությամբ է մարդկային-իրական արտասուքին ընտելա-

ցած հոգին ընկալում արտույտի թռիչքն ու հրճվալից երգը: Եվ հետևում է դառն ու ողբերգական խոստովանությունը՝

Եթե սակայն արհամարհել գիտնայինք
Հպարտությունն, ատելությունն ու երկյուղ,

Եվ մենք ծընած ըլլայինք

Արտասվելու անընտել,

Ինչպես պիտի կրնայինք

հրճուանքիդ յարգն ըմբռնել (1929, № 1,

մայիս-հունիս, էջ 37):

Հոգեկան ընկճվածության պահին է հղացել Շելլին «Երգ» բանաստեղծությունը, երբ նա նեապոլում էր: «Անահիտը» տպագրում է դա՝ Հրաչ Քաջարենցի թարգմանությամբ (1937, № 3—4, ապրիլ-հունիս), ընթերցողին մեծ պոեզի հոգու տառապանքին ու անհուն տագնապներին ծանոթացնելու, նրա ներաշխարհի բեկբեկումները ցույց տալու համար:

Անգլիացի նշանավոր բանաստեղծ Վիլյամ Բլեյկի մասին «Անահիտը» տպագրում է դոկտոր Միհրան Քեշիշյանի հոգվածը և Բլեյկի ստեղծագործություններից մեկը՝ «Այն ատեն Նէ ծնավ դժգույն փափագը» (1929, № 4, էջ 120—123): Հոգվածագիրը Բլեյկի մեծագույն ուժը համարում է ներհայեցողությունը: Նրա մեջ առկա է ճշմարիտ տաղանդի «իրական բոցը, որով նա արտակարգորեն քնարերգակ բանաստեղծ է և խոռովիլ ինքնատիպությամբ արվեստագետ» (1929, № 4, էջ 121):

Իտալացի հուշակավոր բանաստեղծ Զակոմո Լեոպարդիի «Առ Իտալիա» (1909, № 1—2, ապրիլ-մայիս) բանաստեղծությամբ (թարգմ.՝ Արսեն Ղազիկյանի) հանդեսը արձագանքում էր հայ ժողովրդի բախտի ու ճակատագրի խնդիրներին, դարասկզբի աղետալի իրադարձություններին.

Ով, հայրենիք իմ, կտեսնեմ պարիսպներն

Ու կամարներն և արձաններն ու սյուներն—

Եվ աշտարակներն ամայի մեր պապերուն:

Տագնապալի հարցումներով ստեղծվում է դրամատիկ շիկացում, որից հետո միանգամայն տրամաբանական է հնչում կովի ու մարտնչումի գաղափարը.

Ջենքերը, հոս գենքերը, ես միայն

Պիտի կռվիմ ու պիտ իյնամ միայն ես.

Ընեն, երկինք, որ արյունս,

Ըլլա կրակ իտալական կուրցքերուն (1909, № 1—2,

ապրիլ-մայիս, էջ 10):

1911 թ. 9—12 միացյալ համարում տպագրվում են իտալացի բանաստեղծներից մեկի՝ Քարթուշիի «Մարտի երգը» և «Թուրքին հունձը» բանաստեղծությունները՝ Արսեն Ղազիկյանի թարգմանությամբ: Առհասարակ Ա. Ղազիկյանը հսկայական գործ է կատարել իտալական պոեզիայի թարգմանության մարզում, և «Անահիտը» բարձր է գնահատում նրա ծառայությունները: Նույն համարի «Քրոնիկում» հայտնվում է, որ Ա. Ղազիկյանը լույս է ընծալում «Իլիականի» աշխարհաբար թարգմանությունը և գովեստի խոսքեր են ասվում թարգմանչի հասցեին: Մի քանի տարվա ընթացքում Ա. Ղազիկյանը թարգմանություններ է կատարել Դանթեից, Օսիանից, Լեոպարդիից, Վիտորիա Ադանուրից, թարգմանել է «Հենեականը», «Իլիականը» և այլն: Վիթխարի աշխատանք է սա, և «Անահիտը» ամեն կերպ պրոպագանդում ու ողջունում է թարգմանչի անխոնջ գործունեությունը: Հիշյալ համարում լույս են տեսնում նաև Թեոֆիլ Գոթթեի «Հուսկ ըղձանք», Պոլ Վերլենի

«Աշնան երգ», Ժան Մորեասի «Տաղ» քնարական փոքրիկ բանաստեղծությունները՝ Ա. Չոպանյանի թարգմանությամբ:

Վերգիլիոսի ծննդյան 2000-ամյակի առթիվ, 1930 թ. համարներում (№ № 2, 3, 4) շարունակաբար տպագրվում է Մ. Ս. Դավիթ Բեկի հոդվածը, որը, բացի հետաքրքիր ակնարկ լինելուց՝ Վերգիլիոսի, նրա ստեղծագործության և ժամանակի վերաբերյալ, նկարագրում է նաև Սորբոնի հոբելյանական փառավոր հանդեսը: Բավականին հանգամանորեն բնութագրվում են «Հովվականները» և «Մշակականները»: «Էնեականը» Վերգիլիոսի հանճարի բացարձակ հավաստումը եղավ՝ կյանքի ու «հայդենիքի մեծության մի զմայլելի սաղմոս» (1930, № 2, էջ 62), որ խտացնում էր և՛ անցյալը, և՛ գալիքը, և՛ կորուսյալ, և՛ սպասվելիք փառքերը, գրում է հոդվածի հեղինակը:

Հետաքրքիր է նաև իտալական մեկ այլ պոետի՝ Պասկուալե Պիացցոլլայի «Մեռնել արքշիռ» ստեղծագործության տպագրությունը: Բանաստեղծության թարգմանությունը կատարել էր Ա. Չոպանյանը: Թարգմանիչը ջանացել էր պահպանել հեղինակի ներքին ընդվզումի տրամադրությունը՝ մահվան, անէացումի պահին: Ու այդ տրամադրությունը երգին հաղորդում է կենսական ավյուն, սոցիալական շեշտվածություն: Այս երակը զարմանալի մարդկային-փիլիսոփայական մասստատվորում է ստանում՝ «Մարդիկ Աստծո հետ այլ տխուր են» տողով, որը և դառնում է բանաստեղծության լեյտմոտիվը: Այս առումով անկարևոր չէ մի զուգահեռ անցկացնել սրա և տարիներ առաջ տպագրած Հենրի Լոնգֆելլոյի մի ստեղծագործության միջև: Լոնգֆելլոյի «Երիկվան երգ» բանաստեղծության թարգմանությունը (թարգմ.՝ Ա. Չոպանյանի) տպագրվել է «Անահիտի» 1903 թ. հունվարյան համարում (№ 1): Թարգմանչին գրավել էր երգի տաճնապոտ ու անհանգիստ դրամատիզմը, քնարական «արտաքին» շերտերի տակ թաքնված սուր կոնֆլիկտն ու խռովքը: Երկու բանաստեղծությունների մեջ էլ մահվան տառապագին զգացումը, այնուամենայնիվ, չի տանում դեպի կյանքի մերժում, անհուսալի պահամիզմ: Եվ թեմայի ընտրությունը պայմանավորված է զուտ հեղինակների աշխարհավերաբերմունքով. մի հայտնի չափով հենց իբրև բողոք՝ տիրող հասարակարգի, մարդկային-էթիկական հարաբերությունների դեմ: Այս գիծն էլ դուր է եկել Ա. Չոպանյանին, ու նա դիմել է դրանց թարգմանությանը՝ թեկուզ շուրջ երեք ու կես տասնամյակի ժամանակային պատենշ կա արանքում:

Եվրոպական մյուս ժողովուրդների պոեզիայի գնահատում-լուսարանումներից, ինչպես և թարգմանություններից կարելի է առանձնացնել լեհականի և ռումինականի փաստը, որ առաջին հերթին Ադամ Միցկևիչի և Միխայիլ Էմինսկուի ստեղծագործական ժառանգության գնահատություն-մեկնաբանությունները: 1899 թ. 9—10 համարում տպագրվում է Լուի Լեժեի «Միցկևիչ» ուսումնասիրության հայերեն թարգմանությունը: Միցկևիչի քնարը, գրում է Ա. Չոպանյանը, համաշխարհային գրականության նշանակալից երևույթներից մեկն է, քնար, որը հնչեցրեց իր «գեղեցիկ, նուրբ և դժբախտ» ժողովրդի «երազանքը, տառապանքը, հավատքը»: «Միցկևիչ վերջինն է հին աշխարհի բանաստեղծներուն,— շարունակում է նա:— Թեպետ ժամանակակից Կեոթեի ու Պայրոնի, լեհ քերթողը շատ ավելի եղբայրություն ունի Տանթեի մը հետ, քան ԺԹ դարու այդ քերթողներուն» (1899, № 9—10, էջ 295): Հոդվածում բավականին տեղ է հատկացված Միցկևիչի հայրենասիրության բնութագրմանը և նրա ստեղծագործություններից մի քանիսի համառոտակի գնահատականներին:

«Անահիտը» Միցկևիչի «Նախահայրեր» դրամայից տպագրում է բանտի տեսարանը, ուր ներկայացվում են գլխավոր հերոսի՝ Կոնրադի ազատասիրական, հայրենասիրական ու մարդասիրական մեծ ներշնչման ապրումները: Կոնրադը իր՝ Միցկևիչի գեղարվեստական մարմնավորումն է: Նախորդ համարում (1899, № 8) տպագրվել էր լեհ մեծ բանաստեղծի «Տաղ երիտասարդության» արձակ քերթվածը: Հետագա տարիներին նույնպես «Անահիտը» անդրադառնում է Միցկևիչի կյանքի ու ստեղծագործության առանձին դրվագներին:

Իր ընդգրկումով, արժարժած խնդիրների բազմազանությամբ լուրջ ուսումնասիրություն է Հակոբ Սիրունու ծավալուն ակնարկը՝ նվիրված ռումինական պոեզիայի դասական Միխայիլ Էմինեսկուին (1899 թ., № 2): Հ. Սիրունին, փոքրիկ ներածությունից հետո, բանաստեղծի կյանքի ու ստեղծագործության ուղին ներկայացնում է առանձին հատվածային գլուխներում՝ «Իր կյանքն ու գործը», «Իր կազմությունը», «Հայրենասերը», «Սիրողը», «Անվանատեղը», «Մարդը», «Իր ազդեցությունը», «Քաղաքական մարդը», «Հրապարակագիրը», «Տառապողը», «Հոռետեսը»: Ընդամենը 15 տարի է ստեղծագործել էմինեսկուն, բայց թողել է բազմազան ու անմեռ երգեր, որոնցով այսօր հպարտ է ռումին գրականությունը: Թեպետ պոեզիան էր նրա «նախասիրած կալվածը», սակայն արձակի ու դրամատուրգիայի մարզերում նույնպես նշանակալից դեր խաղաց: Շուրջ յոթ տասնյակի հասնող նրա բանաստեղծությունների մեծ մասը սիրո, թախծի, կարոտի երգեր են: Այլաբանական մի քանի բանաստեղծություններում էմինեսկուն արտահայտել է հոռետեսություն ու հուսահատություն: Տպագրվել է 16 տարեկանից սկսած և ստեղծագործական արգասավոր ճանապարհ է անցել: էմինեսկուի ստեղծագործության հետազոտողները գտնում են, որ նրա վրա ամենից ուժեղ ազդեցությունը թողել է Հայնեն: Մյուսին նույնպես օտար ու անհարազատ չէ նրա հոգուն: էմինեսկուն խոդապես ճանաչեց, նախ, աշխատավոր գեղջուկի հոգին, նրա գեղեցիկ շատ հատկանիշները, ծծեց ժողովրդական երգերի ու հեքիաթների կենսահարուստ: Այստեղից էլ՝ նրա խոր ժողովրդայնությունը: 1929 թ. չորրորդ համարում տպագրված բանաստեղծությունները՝ «Ու մայր», «Իդի մը ունիմ դեռ ես», «Անտառին», «Մնաս բարով», այնուամենայնիվ որոշակի պատկերացում են տալիս մեծ բանաստեղծի հույզերի ու մտորումների, նրա ստեղծագործական աշխարհի մասին: Այնուհետև նույն թվականի հինգերորդ համարում «Անահիտը» տպագրում է էմինեսկուի նոր գործերը՝ կրկին Հ. Սիրունու թարգմանությամբ՝ «Եթե ուտեիր...», «Դոնիս», «Բաղձանք», «Քննադատներուն» և այլն: Հաջորդ տարում տպագրվում են էմինեսկուի ուրիշ բանաստեղծությունները՝ «Վենետիկ», «Մառախուղին ընդմեջին», «Երգ» (1930, № 6 ապրիլ-մարտ, թարգմ.՝ Հ. Սիրունու): Ու որքան էլ թարգմանությունները անկատարություններ ունենան, չի կարելի երախտագիտությամբ չհիշել թարգմանչի՝ Հ. Սիրունու եռանդագին ձգտումը՝ հայ ընթերցողին ներկայացնելու ռումին հանճարեղ բանաստեղծ Միխայիլ էմինեսկուի ստեղծագործությունը, որը համահմարդակա մշակույթի փառահեղ էջերից մեկն է:

Ա. Չոպանյանը նվիրյալի հավատքով գրել է. «Ես սիրելու համար ծնած եմ և ոչ թե ատելու»—կըսե Սուփուլի Անտիգոնեն: Անտիգոնեի ընտանիքին է իմ հոգիս: Ու թեպետ շատ լավ կհասկանամ, որ ատելությունը սիրո անբաժան դուզյակն է, և թե ուժեղորեն սիրել գիտցող մը անկարող է հզոր ատելութեններն խուսափելու, կկարծեմ, թե երկուքեն նորեն սերն է գեղեցկագույնը, և հզորագույնը, և բեղմնավորագույնը» (1903, № 4, էջ 13—14): Այդ «հզոր սիրո» հավատքով Ա. Չոպանյանը զինվորագրվեց Գեղեցիկի իդեալին, որի մի արտահայտությունը համարում էր գրական կապերի ու փոխազդեցությունների ազնիվ գործին ծառայելը:

«Անահիտ» հանդեսի դերը և նրա տնօրեն Արշակ Չոպանյանի կատարած մեծ գործը հայ-եվրոպական մշակութային կապերի ոլորտում բարձր գնահատականի է արժանացել ինչպես մեծանուն հայ գրողների, այնպես էլ հուշակավոր շատ եվրոպացիների՝ էմիլ Վերհարնի, Անատոլ Ֆրանսի, Պոլ Ագանի, Ֆրանսիական ակադեմիայի ականավոր շատ անդամների, գրողների, պատմաբանների, մտավորականների, պետական ու մշակութային գործիչների կողմից:

ЕВРОПЕЙСКАЯ ПОЭЗИЯ В ЖУРНАЛЕ «АНАИТ»

МАРГАРИТА МАЛХАСЯН

Резюме

В 1898 г. в Париже начал издаваться армянский литературно-художественный журнал «Анаит». Его основателем и бесомненным редактором был известный поэт, прозаик и общественный деятель Аршак Чопанян. С перерывами журнал издавался более 50 лет. Неопенима заслуга А. Чопаняна в развитии армяно-европейских литературных и культурных связей. Многие страницы журнала были посвящены жизни и творчеству крупнейших европейских писателей, но особенно близка была ему французская поэзия. Журнал не раз обращался к творчеству таких поэтов, как В. Гюго и Ф. Мистраль, Э. Верхарн и П. Верлен, А. де Виньи и В. де Лиль-Адан, Ш. Бодлер и С. Малларме, Л. Дьеркс и Ж. Роденбах, Ж. Риктюс, Факюс и А. де Ноай.

Журнал не обошел вниманием и поэзию других европейских народов. В нем печатаются исследования о творчестве Вергилия и П. Б. Шелли, А. Мицкевича и М. Эминеску, У. Блейка и Сунберна, а также переводы из их произведений.